ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

Armenian
Chess Federation

ARMENIAN
CHESS FEDERATION

0025, Հայաստան, Երևան, Խանջյան 50
Հեռ./ֆաքս՝ (374)10-570758
Էլ. փոստ՝ info@chessfed.am

50, Khandjian Str., 0025, Yerevan, Armenia
Tel./Fax: (374)10-570758
E-mail: info@chessfed.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ № 2

«4» փետրվարի 2021 թ.

Ղեկավարվելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին օրենքի 18.1, 18.8, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կանոնադրության 8.16, 8.19 և 8.19.1 կետերով և հիմք ընդունելով Հայաստանի տղամարդկանց և կանանց հավաքական թիմերի գլխավոր մարզիչների առաջարկությունները, որոշում եմ 2021 թվականի Հայաստանի տղամարդկանց և կանանց հավաքական թիմերը ձևավորել հետևյալ կերպ.

3-ական շախմատիստ՝ 2020 թվականի հունիսի 1-ի և դեկտեմբերի 1-ի միջազգային վարկանիշների միջին լավագույն ցուցանիշներով (շախմատիստը երկու ցուցակում էլ պետք է լինի ՖԻԴԵ-ի ակտիվ շախմատիստների ցանկում):
1-ական շախմատիստ՝ 2021 թվականի Հայաստանի տղամարդկանց և կանանց չեմպիոնները:
Հավաքականի 5-րդ անդամին ընտրելու համար նշանակել ընտրական մրցաշար, որին իրավունք կունենան մասնակցելու՝

- 2021 թվականի Հայաստանի տղամարդկանց և կանանց առաջնություններում 2-րդ և 3-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստները,
- 2020 թվականի հունիսի 1-ի և դեկտեմբերի 1-ի միջազգային վարկանիշների միջին ցուցանիշներով 4-րդ և 5-րդ շախմատիստները (շախմատիստը երկու ցուցակում էլ պետք է լինի ՖԻԴԵ-ի ակտիվ շախմատիստների ցանկում): Գործակցով 4-րդ և 5-րդ շախմատիստների՝ Հայաստանի առաջնությունում 2-րդ կամ 3-րդ հորիզոնական գրավելու դեպքում, կամ մրցաշարի մասնակցությունից հրաժարվելու դեպքում, նրանց տեղն անցնում է գործակցով հաջորդ շախմատիստին և այդպես շարունակ:

ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ